ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը (**այսուհետ՝ Հանձնաժողով**), մասնակցությամբ՝ Հանձնաժողովի նախագահ Հունան Տեր-Վարդանյանի, անդամներ Արա Զոհրաբյանի, Արմինե Ֆանյանի, Միսակ Մարկոսյանի, Գառնիկ Թուխտարյանի, Տաթևիկ Դավթյանի, Արսեն Համբարձումյանի, Արթուր Պողոսյանի և Արտյոմ Սուջյանի,

նկատի ունենալով այն, որ Հանձնաժողովի 17.10.2023թ. թիվ 9/1-Լ որոշման 2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձանց որակավորման քննությունները կազմակերպել և անցկացնել տարին մեկ անգամ,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2024թ. առաջին կիսամյակի ընթացքում անցկացված որակավորման քննություններին «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձանց խմբերից մասնակցել է միայն 5-ը, որոնցից որևէ մեկը չի հանձնել որակավորման քննությունները,

հաշվի առնելով նաև այն, որ յուրաքանչյուր կիսամյակում ՀՀ փաստաբանական ակադեմիան տալիս է 90-ից ավելի շրջանավարտներ, որոնք իրավունք ունեն մասնակցել որակավորման քննություններին,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի, ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված Որակավորման հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 46-րդ կետի և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով, միաձայն

ՈՐՈՇԵՑ՝

1. ***Սահմանել ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրների որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման 2024 թվականի երկրորդ կիսամյակի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:***
2. ***Ժամանակացույցը հրապարակել ՀՀ փաստաբանների պալատի կայքում:***

ՀՀ փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
նախագահ՝ Հունան Տեր-Վարդանյան

Որոշում N 5/1-Լ
ք. Երևան
01 հոկտեմբերի 2024թ.